**8. Որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին**

-----------------------------------------------------------------------------------------

(Թ.Սահակյան)

1)Ընդունել ի գիտություն,որ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր է ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ:

2)Ընդունել ի գիտություն,որ վերը նշված փաստաթղթերի և գնային առաջարկի պատճենները տրամադրվել են հանձնաժողովի նախագահին:

3)Մասնակցի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

4) Հանձնաժողովը որոշեց անմիջապես հաստատել գնահատման արդյունքները և «Լոկատոր» ՓԲԸ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատեց բավարար:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

5) «Գնումների մասին»ՀՀ օրենքի պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց. «ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Լոկատոր» ՓԲԸ,որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով ու ծանուցել «Լոկատոր» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքելու մասին:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի,թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 74-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերության դրույթներով ՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սահմանված կարգով «Լոկատոր» ՓԲԸ-ի հետ կնքել N: « ՇՄՔՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1 » գնման պայմանագիր:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

6)Հաստատել հայտարարության տեքստը /կցվում է/ և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն www.gnumner.am կայքում հրապարակել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին համառոտ տեղեկատվությունը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**9. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

-----------------------------------------------------------------------------------------

(Թ.Սահակյան)

Ընդունել ի գիտություն, որ. հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0: